

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ  
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

**Համայնքի 2019 թվականի**

**ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**



**Կազմել է համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը**

**Հաստատվել է համայնքի ավագանու \_\_\_\_\_ 2019թ-ի թիվ -Ա որոշմամբ**

**Սևան 2019թ.**

# Բովանդակություն

|                                                                                 |    |
|---------------------------------------------------------------------------------|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----                                                               | 3  |
| 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ-----                              | 3  |
| 2. ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ----- | 7  |
| 3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2019Թ. ԾՐԱԳԻՐԸ -----                           | 31 |
| 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----                                     | 35 |
| 5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----                          | 37 |

## Ներածություն

Սևան համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի (**ՏԱՊ**) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից 2017թ. հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (**ՀՀԶԾ-ով**) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

Հիմք ունենալով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ **ՏԱՊ-ն** ուղղված է հստակեցնելու 2019թ-ին համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ՝ այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները:

**ՏԱՊ-ի** մշակման մեթոդական հիմք է հանդիսացել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) ֆինանսավորմամբ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստած «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակում» մեթոդական ուղեցույցը:

**ՏԱՊ-ը** բաղկացած է **5 բաժիններից**.

**1-ին բաժնում** ներկայացված են համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

**ՏԱՊ-ի 2-րդ բաժնում** ներկայացված են համայնքի 2018 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 4**):

**ՏԱՊ-ի 3-րդ բաժնում** ներկայացված է համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 6**):

**ՏԱՊ-ի 4-րդ բաժնում** բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 7**):

**ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (Աղյուսակ 8)** ներկայացված է տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

### Համայնքի տեսլականը՝

Իրականացվող աշխատանքների արդյունքում Սևան համայնքում ակնկալվում է բյուջեի 100 տոկոս հավաքագրման ապահովում, ներդրումների աճ, նպատակային և հասցեական ծրագրերի իրականացում, ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, ներհամայնքային ենթակառուցվածքների բարելավում, միջհամայնքային համագործակցության խթանում, բնակարանային ֆոնդի պահպանությանը միտված ծրագրերի իրականացում, նախադպրոցական, արտադպրոցական, մարզամշակութային հաստատությունների շենքային պայմանների բարելավում, զբոսաշրջային գործի որակական բարելավում, հիմնական ծառայությունների հասանելիություն ունեցող տնային տնտեսությունների քանակի աճ, աշխատատեղերի ստեղծում, տեղական ռեսուրսների օգտագործման հնարավորությունների հստակեցում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, քույր քաղաքներ ցանցի ընդլայնում, նորարարական գաղափարների ներդրում:

Ունենալով համայնքի՝ առաջիկա տարիների համար մատնանշված տեսլականը՝ հստակեցված են նաև զարգացման հիմնական ուղղությունները՝

- ✓ զբոսաշրջության կայուն զարգացում
- ✓ գործարար միջավայրի բարելավում
- ✓ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում

Այս ուղղությունների համար զարգացման խթան են դառնալու այն ծրագրերն ու ընթացիկ աշխատանքները, որոնց շնորհիվ գրանցվելու են վերը նշված փոփոխությունները:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները:

Ցուցանիշի ելակետային արժեքը 2018 թվականին գրանցված ցուցանիշն է:

Ցուցանիշի թիրախային արժեքը համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2018 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

### Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

| Ցուցանիշ                                                                           | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
|------------------------------------------------------------------------------------|------------------|-----------------|
| Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%) | 34.7             | 36.8            |
| Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)                              | 25.844           | 26.110          |
| Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)                   | 28.420.0         | 65000.0         |
| Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)               | 1475/4910        | 1490/5050       |

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

### Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

| Ոլորտային նպատակ                                                                                                      | Վերջնական արդյունքի՝                                                                                                              |                  |                 |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------|-----------------|
|                                                                                                                       | Ցուցանիշ                                                                                                                          | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
| <b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>                                                                                             |                                                                                                                                   |                  |                 |
| Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը համայնքային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:              | ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին (հարցումների հիման վրա), %            | 75               | 80              |
|                                                                                                                       | Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %                                                | 34.7             | 36.8            |
|                                                                                                                       | ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը (հարցումների հիման վրա), %                        | 50               | 55              |
| <b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>                                                                            |                                                                                                                                   |                  |                 |
| Նպաստել երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացմանը:                                                               | Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը, այո/ոչ                                                            | այո              | այո             |
|                                                                                                                       | Զորակոչիկների բավարարվածությունը մատուցված ծառայություններից (հարցումների հիման վրա), %                                           | 80               | 85              |
| <b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>           |                                                                                                                                   |                  |                 |
| Աղետների վերաբերյալ կրթական նյութերի պատրաստում և աղետների կառավարման վերաբերյալ կրթության խթանում                    | Համայնքի բնակիչների իրազեկվածության աստիճանը աղետների վերաբերյալ /%/                                                              | 35               | 38              |
| <b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>                                                              |                                                                                                                                   |                  |                 |
| Իրականացնել համայնքի բնակֆոնդի արդյունավետ կառավարումը և արտաքին լուսավորության և ջրամատակարարման ցանցերի պահպանումը: | Նորոգված տանիքներ ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %                                                 | 40               | 45              |
|                                                                                                                       | Նորոգված մուտքեր ունեցող բազմաբնակարան շենքերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %                                                  | 70               | 75              |
|                                                                                                                       | Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %                                                                 | 75               | 85              |
|                                                                                                                       | Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորված տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, % | 12               | 18              |
|                                                                                                                       | Համայնքի բնակիչների                                                                                                               | 90               | 100             |

|                                                                                                                             |                                                                                                                                                       |        |        |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------|--------|
|                                                                                                                             | բավարարվածությունը մատուցված ծրամատակարարման ծառայություններից (հարցումների հիման վրա), %                                                             |        |        |
| <b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b>                                                                                              |                                                                                                                                                       |        |        |
| 2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:        | -                                                                                                                                                     | -      | -      |
| <b>Ոլորտ 6. Ճանապարհաշինություն</b>                                                                                         |                                                                                                                                                       |        |        |
| Բարելավել ներհամայնքային ճանապարհների վիճակը, ապահովել բնակիչների, տրանսպորտի անվտանգ տեղաշարժը:                            | Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների և փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %                                                        | 70     | 85     |
|                                                                                                                             | Համայնքային ենթակառուցվածքային ճանապարհներին և փողոցներում տեղադրված ճանապարհային նշանների թվի տեսակարար կշիռը անհրաժեշտ ճանապարհային նշանների մեջ, % | 70     | 75     |
| <b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b>                                                                                   |                                                                                                                                                       |        |        |
| 2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:        | Սևան համայնքի առևտրի կանոնների ներդրումից հետո առևտրի կանոնակարգման ուղղված միջոցառումները                                                            | -      | 30     |
| <b>Ոլորտ 8. Կրթություն</b>                                                                                                  |                                                                                                                                                       |        |        |
| Ապահովել համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայությունների մատուցումը: | Անհրաժեշտ շենքային պայմաններով ապահովված մանկապարտեզների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, %                                                            | 80     | 90     |
|                                                                                                                             | Տարվա ընթացքում մատուցված նախադպրոցական կրթության ծառայության արժեքը մեկ երեխայի հաշվով, հազ.դրամ                                                     | 23.000 | 24.000 |
|                                                                                                                             | Մատուցված արտադպրոցական դաստիարակության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %                                                          | 85     | 90     |
|                                                                                                                             | Բնակիչների բավարարվածությունը մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայություններից(հարցումների հիման վրա), %                                     | 55     | 65     |
|                                                                                                                             | Անհրաժեշտ շենքային պայմաններով ապահովված արտադպրոցական դաստիարակության խմբակների տեսակար կշիռը դրանց ընդհանուր թվի մեջ,%                              | 85     | 95     |
| <b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>                                                           |                                                                                                                                                       |        |        |
| Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը և ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը:                                     | Համայնքային գրադարանի առկայություն, այո/ոչ                                                                                                            | այո    | այո    |
|                                                                                                                             | Տարվա ընթացքում գրադարանի                                                                                                                             | -      | 45     |

|                                                                                                                                                                            |                                                                                                                                   |                                     |     |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------|-----|
|                                                                                                                                                                            | ծառայություններից օգտված բնակիչների թվի տեսակարար կշիռը բնակիչների ընդհանուր թվի մեջ, %                                           | /վերանորոգման ընթացքի մեջ է/        |     |
|                                                                                                                                                                            | Տարվա ընթացքում թանգարան այցելած բնակիչների տեսակարար կշիռը բնակիչների ընդհանուր թվի մեջ, %                                       | տարածքի վերանորոգումը ընթացքի մեջ է | 20  |
|                                                                                                                                                                            | Մատուցված մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %                                                   | 60                                  | 70  |
| <b>Ոլորտ 10. Առողջապահություն</b>                                                                                                                                          |                                                                                                                                   |                                     |     |
| 2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:                                                       | -                                                                                                                                 | -                                   | -   |
| <b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b>                                                                                                                               |                                                                                                                                   |                                     |     |
| Բարելավել ֆիզիկական կուլտուրայի մասսայականացումը.<br>Ավելացնել մարզական միջոցառումների թիվը                                                                                | Մասսայական սպորտի զարգացմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացում                                                        | 14                                  | 20  |
|                                                                                                                                                                            | Բնակչության ընդգրկվածությունը մարզական միջոցառումներին %                                                                          | 22                                  | 28  |
| <b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>                                                                                                                                 |                                                                                                                                   |                                     |     |
| Բարելավել սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական վիճակը                                                                                                                | Սոցիալական ծրագրերից շահառուների բավարարվածությունը                                                                               | բավարար                             | լավ |
|                                                                                                                                                                            | Սոցիալական աջակցություն ստացող անապահով ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ %        | 18                                  | 25  |
| <b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b>                                                                                                                                        |                                                                                                                                   |                                     |     |
| 2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել համայնքում գյուղատնտեսական նշանակության հողեր առկա չեն | -                                                                                                                                 | -                                   | -   |
| <b>Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա</b>                                                                                                                        |                                                                                                                                   |                                     |     |
| Ամբողջացնել համայնքում առկա անասնազլխաքանակի վերաբերյալ տեղեկատվական բազան                                                                                                 | բազայի առկայություն                                                                                                               | 85                                  | 95  |
| <b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>                                                                                                                            |                                                                                                                                   |                                     |     |
|                                                                                                                                                                            | Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը սանիտարական մաքրման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, % | 85                                  | 90  |

|                                                                                                                                                                       |                                                                                                                                   |     |     |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|-----|
| Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը | Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա), % | 85  | 95  |
|                                                                                                                                                                       | Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացած աղբի ընդհանուր քանակի մեջ, %            | 70  | 80  |
|                                                                                                                                                                       | Համայնքի խնամվող կանաչապատ հատվածների տեսակարար կշիռը կանաչապատ հատվածների մեջ %                                                  | 65  | 70  |
| <b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b>                                                                                                                                      |                                                                                                                                   |     |     |
| Ապահովել համայնքում զբոսաշրջության զարգացումը                                                                                                                         | Համայնք այցելած զբոսաշրջիկների բավարարվածության աստիճանը մատուցված համայնքային ծառայություններից (հարցումների հիման վրա), %       | 60  | 70  |
|                                                                                                                                                                       | Համայնք այցելած զբոսաշրջիկների թվի աճը նախորդ տարվա համեմատ, %                                                                    | 12  | 20  |
|                                                                                                                                                                       | Համայնքում հյուրատների առկայություն                                                                                               | 18  | 25  |
|                                                                                                                                                                       | Զբոսաշրջային տարածքներում ծրագրերի ներդրում                                                                                       | 5   | 8   |
| <b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարման բնակիչների մասնակցություն</b>                                                                                                    |                                                                                                                                   |     |     |
| Ապահովել բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը                                                                                                          | հանրային լուծումներին, քննարկումների կազմակերպում                                                                                 | 4   | 8   |
|                                                                                                                                                                       | ավագանու նիստերի առցանց հեռարձակման առկայություն                                                                                  | այո | այո |

## 2. Համայնքի 2019թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

### Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

| Հ/հ                       | Ծրագրի անվանումը                                                        | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) |
|---------------------------|-------------------------------------------------------------------------|---------------------------|
| <b>Ոլորտ 1. Ընդհանուր</b> |                                                                         |                           |
| 1.                        | Համայնքի աշխատակազմի պահպանում                                          | 110800.0                  |
| 2.                        | Ընդհանուր բնույթի համայնքային այլ ծառայությունների մատուցման բարելավում | 3200.0                    |
| 3.                        | Ընդհանուր բնույթի ծառայություններ                                       | -                         |
| <b>Ընդամենը</b>           |                                                                         | <b>114000.0</b>           |



| <b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b>                        |                                                                               |                 |
|-------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------|-----------------|
| 1.                                                                | Քաղաքացիական պաշտպանության կառավարմանն աջակցություն                           | -               |
| <b>Ընդամենը</b>                                                   |                                                                               | <b>-</b>        |
| <b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>          |                                                                               |                 |
| 1.                                                                | Համայնքի լուսավորության ցանցի սպասարկում                                      | 3000.0          |
| 2.                                                                | Համայնքի բնակելի ֆոնդի արդյունավետ կառավարում                                 | 5000.0          |
| 3.                                                                | Կապիտալ աշխատանքների իրականացում                                              | 6000.0          |
| 4.                                                                | Փողոցային լուսավորություն                                                     | 11700.0         |
| <b>Ընդամենը</b>                                                   |                                                                               | <b>25700.0</b>  |
| <b>Ոլորտ 6. Ճանապարհաշինություն</b>                               |                                                                               |                 |
| 1.                                                                | Փողոցների ճանապարհների բնագիկ նորոգում                                        | 102500.0        |
| <b>Ընդամենը</b>                                                   |                                                                               | <b>102500.0</b> |
| <b>Ոլորտ 8. Կրթություն</b>                                        |                                                                               |                 |
| 1.                                                                | Համայնքում նախադպրոցական կրթության կազմակերպում                               | 152000.0        |
| 2.                                                                | Համայնքում արտադպրոցական կրթության կազմակերպում                               | 74000.0         |
| <b>Ընդամենը</b>                                                   |                                                                               | <b>226000.0</b> |
| <b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b> |                                                                               |                 |
| 1.                                                                | Համայնքի մշակութային միջավայրի բարելավում, որակյալ ծառայությունների մատուցում | 4500.0          |
| <b>Ընդամենը</b>                                                   |                                                                               | <b>4500.0</b>   |
| <b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</b>                        |                                                                               |                 |
| 1.                                                                | Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, կազմակերպություններին աջակցություն  | 11000.0         |
| <b>Ընդամենը</b>                                                   |                                                                               | <b>11000.0</b>  |
| <b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b>                   |                                                                               |                 |
| 1.                                                                | Համայնքում կոմունալ ծառայությունների մատուցում                                | 97800.0         |
| <b>Ընդամենը</b>                                                   |                                                                               | <b>97800.0</b>  |
| <b>Ընդհանուրը</b>                                                 |                                                                               | <b>581500.0</b> |

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

**Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով**

| Հ/հ                                                      | Ծրագրի անվանումը                                                               | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) |
|----------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------|---------------------------|
| <b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b> |                                                                                |                           |
| 1.                                                       | Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում անվտանգության ապահովում | 80000.0                   |
| 2.                                                       | Խաղա և մարզահրապարակի կառուցում                                                | 5000.0                    |
| 3.                                                       | Քայլուղու և աստիճանահարթակի կառուցում, բարեկարգում                             | 3300.0                    |
| 4.                                                       | Համայնքի երկու փողոցների LED լուսավորության անցկացում                          | քննարկման փուլ            |
| 5.                                                       | Գազարինի ամբուլատորիայի վերանորոգում                                           | բարեգործական              |
| <b>Ոլորտ 6. Ճանապարհաշինություն</b>                      |                                                                                |                           |
| 1.                                                       | Գոմաձոր, Ցամաքաբերդ թաղամասերը միացնող ճանապարհի հիմնանորոգում                 | 500000.0                  |

|                                                                   |                                                                                               |                |
|-------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------|----------------|
| 2                                                                 | Չարենց փողոցի սկզբնամաս /մինչև Չարենց-Ելենովկա փողոցների խաչմերուկ/                           | 60000.0        |
| 3                                                                 | Հովհ. Թումանյան փողոցի հիմնանորոգում                                                          | 44000.0        |
| 4                                                                 | Գագարին գյուղի Գայի փողոցի ասֆալտապատում                                                      | 22000.0        |
| <b>Ընդամենը</b>                                                   |                                                                                               |                |
| <b>Ոլորտ 8.Կրթություն</b>                                         |                                                                                               |                |
| 1                                                                 | Թիվ 1 «Բողբոջ» մսուր-մանկապարտեզի հիմնանորոգում                                               | 350000.0       |
| 2                                                                 | Գագարինի մանկապարտեզի կահավորում                                                              | բարեգործական   |
| <b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b> |                                                                                               |                |
| 1.                                                                | Երաժշտական դպրոցի շենքի ամրացում կամ դպրոցի տեղափոխում                                        | քննարկման փուլ |
| 2.                                                                | Ուսանողական ավտոբուսի ձեռքբերում                                                              | բարեգործական   |
| <b>Ոլորտ 16.Զբոսաշրջություն</b>                                   |                                                                                               |                |
| 1                                                                 | Համայնքում զբոսաշրջության խթանմանն ուղղված ծրագրերի իրականացում /փառատոն, տպագրական աշխատանք/ | 3000.0         |
| <b>Ընդամենը</b>                                                   |                                                                                               |                |
| <b>Ընդհանուրը</b>                                                 |                                                                                               |                |

**Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների**

| Ամփոփ նկարագիր                                                                                                                                | Արդյունքային ցուցանիշներ                                                                                                                                                                                                                                                                                                                           | Տեղեկատվության աղբյուրներ                                             | Պատասխանատու                             | Ժամկետ                   | Ռիսկեր                                                         |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------|------------------------------------------|--------------------------|----------------------------------------------------------------|
| Ոլորտ 1. Ընդհանուր                                                                                                                            |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                                                                       |                                          |                          |                                                                |
| Ոլորտային նպատակ<br>Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը համայնքային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:                  | Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.<br>1.ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին - 80%<br>2.Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում – 36.8%<br>3,ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը - 55 % |                                                                       |                                          |                          |                                                                |
| Ծրագիր 1. Համայնքի աշխատակազմի պահպանում                                                                                                      |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                                                                       |                                          |                          |                                                                |
| Ծրագրի նպատակ<br>Ապահովել ՏԻՄ-երի, աշխատակազմի արդյունավետ գործունեությունը, թափանցիկ կառավարումը և բնակչությանը ծառայությունների մատուցումը: | Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.<br>1. ՏԻՄ-երը, աշխատակազմը, բնականոն գործել են, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը<br>2.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների                                                                                                                 | Ծրագրի գնահատման համակարգ<br>Կիսամյակային և տարեկան հաշվետվություններ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, | 2019թ. հունվար–դեկտեմբեր | մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների ոչ բավարար վիճակ |

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |                                                                                                                                                                                                                      |                                                                                                                                                                                                                                                                                     |                                                              |                                                                                                                       |                                                                             |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------|
|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   | տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում – 36.8%                                                                                                                                                  |                                                                                                                                                                                                                                                                                     |                                                              |                                                                                                                       |                                                                             |
| <b>Միջանկյալ արդյունքներ.</b><br>Ապահովվել է ՏԻՄ-երի, աշխատակազմի բնականոն և արդյունավետ գործունեությունը, թափանցիկ կառավարումը և բնակչությանը ծառայությունների մատուցումը, աճել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում:                                                                                              |                                                                                                                                                                                                                      | <b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b><br>1, Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների թիվը - 49<br>2. 1. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության մակարդակը աճել է<br>3, Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 249 օր |                                                              | <b>Տեղեկատվական աղբյուրներ</b><br>Աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, ՀԿ-ներ, բնակիչներ              |                                                                             |
| <b>Միջոցառումներ (գործողություններ)</b><br>1.ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում<br>2. Աշխատակազմի կողմից տեղական ինքնակառավարման մարմինների համար օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված լիազորությունների և քաղաքացիական իրավահարաբերությունների իրականացում<br>3. Մարդկային ռեսուրսների կառավարման նոր գործիքների ներդրում |                                                                                                                                                                                                                      | <b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b><br>1,Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր 110800.0 <b>հազ. դրամ</b><br>2.Համայնքապետարանի վարչական շենք և գույք                                                                                                 |                                                              |                                                                                                                       |                                                                             |
